

Միբելի՛ ուսուցիչներ,

ջերմորեն շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ:

Ձեր ուսերին է դրված սերունդների կրթության ու դաստիարակության դժվարին, բայց և հայրենանվեր ու պատվաբեր գործը:

Դուք եք ապագա սերնդի կրթությունն ապահովելուն զուգընթաց, նրանց հոգիներում ձևավորում մարդկային լավագույն որակներ:

Ձեր շնորհիվ են նրանք ընկալում հայրենասիրության, մարդասիրության, պատասխանատվության գաղափարները:

Մեծ ու անգնահատելի է նաև Ձեր ավանդը մեր երկրի արժանավոր քաղաքացու ձևավորման գործում:

Եվս մեկ անգամ իմ և համայնքապետարանի աշխատակիցների անունից շնորհավորում եմ Մեծամոր համայնքի բոլոր դպրոցների ուսուցիչներին՝ մասնագիտական տոնի կապակցությամբ, մաղթում եմ առողջություն, երջանկություն և համբերատար աշխատանք: